Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 705 - Ա
որոշման

«ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Սոցիալական պայմանների բարելավման և էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Սիսիան քաղաքում և Անգեղակոթ բնակավայրում, ինչպես նաև Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ու այդ համայնքներում բնակվող սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքների տների տանիքներին անհատույց արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաք, Անգեղակոթ, Տեղ և Կոռնիձոր բնակավայրեր, սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 9,520,137 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Սիսիան քաղաքում և Անգեղակոթ բնակավայրում բնակվող, Լեռնային Ղարաբաղից տեղահանված, սոցիալապես անապահով ու կարիքավոր 27 ընտանիքներ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում բնակվող, Լեռնային Ղարաբաղից տեղահանված, սոցիալապես անապահով ու կարիքավոր 12 ընտանիքներ: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի՝ Սիսիան քաղաքում և Անգեղակոթ բնակավայրում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված, սոցիալապես անապահով ու կարիքավոր 27 ընտանիքների տների տանիքներին արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,907,741 դրամի չափով.<br>2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված, սոցիալապես անապահով ու կարիքավոր 12 ընտանիքների տների տանիքներին արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,612,396 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) 27 բնակիչների տան տանիքների ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 5,907,741 դրամի չափով.<br>2) 12 բնակիչների տան տանիքների ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 3,612,396 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նախատեսված չեն: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի և Տեղի  համայնքապետարաններ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ